**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՍՈԼԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Սոլակ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Սոլակ, 094611991, solak.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի N 71

## ՑԱՆԿԱՊԱՏԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Շինարարության թույլտվություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Կարինե Մովսիսյանի դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ`

Թույլատրել Կարինե Մովսիսյանին կատարելու սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզի Սոլակ համայնքի 5-րդ փողոց 2-րդ նրբանցք 9 հասցեում գտնվող /կադաստրային ծածկագիր 07-060-0060-0007/ տնամերձ հողամասի ցանկապատի կառուցման և հողի հարթեցման շինարարական աշխատանքներ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴԳԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ

2020 թ. 21 ՕԳՈՍՏՈՍԻ
գ.Սոլակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՍՈԼԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Սոլակ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Սոլակ, 094611991, solak.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
24 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի N 72

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՍՈԼԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետի պահանջով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Համաքաղաքացիներ Սիրուշ Դավթյանին, Էդվարդ Դավթյանին, քաղաքացիներ Կարինե Ստեփանյանին ծնվ. 1959թ, Վիոլետա Դավթյանին ծնվ. 1980թ, Կամիլլա Դավթյանին ծնվ. 1978թ, Լիլիթ Դավթյանին ծնվ. 1986թ սեփականության իրավունքով պատկանող բնակելի տանը և տնամերձ հողամասին /սեփականության վկայական թիվ 1333636, կադաստրային ծածկագիր 07-060-090-0004/ տրամադրել հետևյալ հասցեն՝ Կոտայքի մարզ Սոլակ համայնք 10-րդ թաղամաս 39:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԳԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ

2020 թ 24 ՕԳՈՍՏՈՍԻ
գ.Սոլակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՍՈԼԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Սոլակ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Սոլակ, 094611991, solak.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի N 73

## ԼԻԱՆԱ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշման պահանջներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ`

1. Լիանա Միրզոյանին տալ Կոտայքի մարզի Սոլակ համայնքի 5-րդ փողոց 9-րդ նրբանցք 9 հասցեում բնակելի տան շինարարության թույլտվություն (շինարարության թույլտվությունը կցվում է):
2. Կառուցապատողը շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Սոլակ համայնքի ղեկավարին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` ԷԴԳԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ

2020 թ. 24 ՕԳՈՍՏՈՍԻ
գ.Սոլակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՍՈԼԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Սոլակ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Սոլակ, 094611991, solak.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
31 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի N 74

ՆՈՐԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ, ՍՈՒՍԱՆՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԻ, ԺԻՐԱՅՐ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ, ՆԱՐԻՆԵ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ, ՀՐԱՅՐ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 22 կետերի, 1998 թվականի դեկտեմբերի 31-ի թիվ 867 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ կետի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետի պահանջներով , հիմք ընդունելով իրենց սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Սոլակ համայնքի 12-րդ թաղամաս 46 հասցեի հողամասում 2018 թվականին ինքնակամ կառուցված S=30,77 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը, 3 ինքնակամ բացված պատուհան և 1 դուռը օրինականացնելու մասին Նորիկ Ստեփանյանի դիմումը և այն, որ ըստ համայնքի կադաստրային քարտեզի, <<ՊԻՌԱՄԻԴԱ>> ՍՊԸ-ի կողմից հաստատված հատակագծի, ինքնակամ կառույցի պահպանումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինության նորմերի և կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Նորիկ Ստեփանյանին, Սուսաննա Մուշեղյանին, Ժիրայր Ստեփանյանին, Նարինե Ստեփանյանին, Հրայր Ստեփանյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Սոլակ համայնքի 12-րդ թաղամաս 46 հասցեի հողամասում 2018 թվականին ինքնակամ կառուցված S=30,77 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը, 3 ինքնակամ բացված պատուհանը և 1 դուռը համարել օրինական:

2. Հաշվի առնելով, որ S=30,77քմ արտաքին մակերեսով բնակելի տունը ինքնակամ կառուցվել է 2018 թվականին, ապա նրա օրինականացման համար համայնքի բյուջե վճարել 33 847 ՀՀ դրամ, ինքնակամ տեղադրված 3 պատուհանի և 1 դռան օրինականացման համար համայնքի բյուջե վճարել 4400 ՀՀ դրամ:
3. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար վճարների 60 -օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

4. Որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԳԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ

2020 թ. 31 ՕԳՈՍՏՈՍԻ

գ.Սոլակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՍՈԼԱԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Սոլակ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Սոլակ, 094611991, solak.kotayq@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

02 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 75

## ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> 34-րդ հոդվածի 2-րդ մասի և Աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Աշխատանքային պարտականությունները բարեխղճորեն կատարելու համար համայնքի ղեկավար Էդգար Խաչատրյանի նկատմամբ կիրառել <<միանվագ դրամական պարգևատրում>> խրախուսանք 110 000 ՀՀ դրամի չափով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴԳԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ

2020թ. 02 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ
գ.Սոլակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՍՈԼԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Սոլակ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Սոլակ, 094611991, solak.kotayq@mta.gov.am

### ՈՐՈՇՈՒՄ

02 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 76

### ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՍՈԼԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 1-Ի ԹԻՎ 16 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի պահանջներով

ՈՐՈՇՈՒՄԵՄ՝

Կոտայքի մարզի Սոլակ համայնքի ղեկիավարի 2017թվականի փետրվարի 1-ի «Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմը հաստատելու մասին» թիվ 16 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները

1. Որոշման 2-րդ կետում <<Արտավազդ Բարսեղյան, Տիգրան Գեղամյան, Արմեն Վարդանյան>> բառերը փոխարինել <<Արշատ Առաքելյան, Հարություն Ալեքսանյան, Արմեն Հակոբյան>> բառերով:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴԳԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ

2020թ. 02 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ
գ.Սոլակ